ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Սովետահայ բանագիտությունը ծանր և անդառնալի կորուստ կրեց. 75 տարեկան հասակում վախճանվեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր Արամ Տիգրանի Ղանալանյանը։

Ա. Ղանալանյանը ծնվել է 1909 թ. փետրվարի 12-ին Ախալցխա քաղաքում, յոթնամյա կրթությունը ստացել է ծննդավայրում, իսկ միջնակարգը՝ Թբիլիսիի 72-րդ դպրոցում։ 1927-ին ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը, աշակերտելով նշանավոր հայագետներ Մ. Աբեղյանին, Հր. Աճառյանին, Գր. Ղափանցյանին, Ա. Տերտերյանին։ Ավարտելով համալսարանը, 1932-ին Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի երաշխավորությամբ ու խորհրդով աշխատանքի է անցել Հայաստանի նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտում և խորամուխ եղել հայ ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության մեջ։ Աշխատել է նաև Հայաստանի կուլտուրայի պատմության, պատմության և գրականության, Արմֆանի լեզվի և գրականության ինստիտուտներում նախ կրտսեր, ապա ավագ գիտաշխատողի պաշտոններում, ամենուրեք ըզբաղվելով հայ ժողովրդական բանահյուսության հետազոտությամբ։ 1942 թ. Ա. Ղանալանյանը պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա («Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը»), 1943—1959 թթ. վարել Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության սեկտորի վարիչի պաշտոնը,

1965-ին ընտրվել ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1970-ին պաշտպանել է դոկտորական դիսերտացիա («Հայկական ավանդությունները»), իսկ 1977-ից ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ էր։ Գիտահետազոտական արդյունավետ աշխատանքներին զուգընթաց Ա. Ղանալանյանը երկար տարիներ հայ ժողովրդական բանահյուսություն է դասավանդել Երևանի պետական համալսարանում (1937—1941), Աբովյանի անվան (1934—1951) և Երևանի պետական հեռակա մանկավարժական (1936—1948) ինստիտուտներում, դառնալով իր առարկայի սիրված ու հարգված դասախոսը, ուսանողների մեջ շերմ սեր ու հետաքրքրություն արթնացնելով հարազատ ժողովրդի հոգևոր մշակույթի նկատմամբ։ Նրա գիտական անմիջական ղեկավարությամբ է աճել ու դաստիարակվել արդի սովետահայ բանագետների միջին սերունդը։

Մեծ են Ա. Ղանալանյանի գիտական ծառայությունները սովետահայ բանագիտությանը։ Իր շուրջ կեդարյա գիտահետազոտական աշխատանքների ընթացքում նա զբաղվել է հայ բանահյուսության գրեթե բոլոր կարևոր ժանրերի հավաքմամբ և ուսումնասիրմամբ։ Իր գիտական նախաքայլերը նա սկսել է բանահավաքչական և աղյուսագիտական «սուտ» ու քրտնաջան աշխատանքով։ 1930-ական թթ. սկզբներին Կ. Մելիք-Օհանջանյանի ցուցումներով Ա. Ղանալանյանը կազմում է բանահյուսական արխիվում պահվող շուրջ 1000 հեքիաթների այուժեների համաբարբառը, իսկ Մ. Աբեղյանի խորհրդով՝ հայ բանահյուսության մատենագիտությունը։ Հայաստանի տարբեր շրջաններից ու գյուղերից նա հավաքում, կուտակում ու արխիվավորում է բանահյուսական բազմաժանր ու մեծարժեք նյութեր։ Նույն նվիրումով է հետագայում նա

Հեռանամուխ լինում նաև սեփական գիտահետազոտական աշխատանքներին։ Ջրնթանալով տրորված արահետներով, Ա. Ղանալանյանը հավաքել ու հետազոտության է ենթարկել բանահյուսության այնպիսի ժանրեր ու տեսակներ, բանագիտական այնպիսի խնդիրներ, որոնք բնավ չեն շոշափվել հայ նախընթաց բանագիտության կողմից։ Ջանադիր, քրտնաջան, տառապալից աշխատանքով Ա. Ղանալանյանը տարիների ընթացքում, մեկը մյուսի ետևից լույս աշխարհ է հանում իր գլխավոր աշխատությունները՝ «Հայ շինականի աշխատանքի երգերը» (1937. տակավին ձեռագիր վիճակում 1935-ին այն արժանացել էր Մելքոնյան մրցանակի), «Հայկական առաջանին» երկու հրատարակությամբ (1951, 1960), «Ավանդապատումը» (հայերեն՝ 1969 և ռուսերեն՝ 1979), «Հայ ժողովրդական հեքիաթները» (հայերեն՝ 1930 և ռուսերեն՝ 1965)։ Տասնյակ տարիներ նա զբաղվել է հայ նոր գրականության և բանահյուսության փոխառնչությունների գիտական կարևոր խնդրի ուսումնասիրությամբ, հրապարակ հանելով այդ խնդրին նվիրված մեկ տասնյակի չափ գրքեր և հետազոտություններ։ Մ. Աբեղյանի, Դ. Աբովի ղեկավարությամբ ու համագործակցությամբ Ա. Ղանալանյանը կազմել է հայ ժողովրդական հերոսավեպի հյուսված համա՛ավաք ընագիրը (1939), հրապարակել վեպի տարբեր կողմերի ու խնդիրների վերաբերյալ մի քանի հետազոտություններ։ Տարիներ շարունակ զբաղվել է հայագիտության, մասնավորապես հայ բանագիտության պատմության հարցերով, հրատարակել հայագիտության նշանավոր երախտավորներ՝ Գ. Սրվանձտյանի, Մ. Աբեղյանի, Ն. Մառի, Հ. Օրբելու, Կ. Մելիք-Օհանջանյանի բանագիտական վաստակն արժեքավորող մի շարք ուսումնասիրություններ։ Նրա կարապի երգը դարձան հայ բանագիտության համակարգված պատմության ավարտված շարադրանքը և հայ երգիծական զրույցների համահավաք ընագրերի կազմումն ու ուսումնասիրությունը («Երգիծապատում»), որոնց վրա մինչև իր սրգաստավոր կյանքի մայրամուտը չանդրդրեն աշխատում էր անվանի գիտնականը։ Իր գիտական գործունեության ընթացքում Ա. Ղանալանյանը զբաղվել է նաև հայ բանահյուսության գիտական պրոպագանդայով, կազմել ու հրատարակել գիտահանրամատչելի բազմաթիվ ժողովածուներ, գրքույկներ, հոդվածներ, ձեռագրի իրավունքով հրապարակ հանել հայ ժողովրդական բանահյուսության ուսումնական ձեռնարկի մի քանի պրակներ։

Իր կեսդարյա գիտահետազոտական ու դիտամանկավարժական գործունեության բեղմնավոր արդյունքներով Ա. Ղանալանյանն իրավամբ վաստակել է սովետահայ բանագիտության ռահվիրայի և ուղի հումահարթողի նախապատիվը։ Զարգացնելով իր մեծ ուսուցչի՝ Մ. Աբեղյանի բանագիտական դասական ավանդները, նա տասնամյակներ շարունակ մեծ պատասխանատվությամբ ընթացք տվեց սովետահայ բանագիտության զարգացմանը և իր մարդկային բարձր ու առինքնող հատկանիշներով, գիտական անաչառ սիրզբունքայնությամբ արժանացավ համազգային ճանաչման ու գիտական պատկառելի հեղինակության։

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր